



## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՈՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Կոնդակ Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի անունով, որով հաստատուեց Տփխիսի Մարիամեան-Յովաննեան օրիորդաց գլուզի տեսուչ պլ. Յովհաննէս Տէր-Միրաքեանը: 23 սեպտեմբ., թ. 1381:

Կոնդակ Արագատականի Հայոց թեմի առաջնորդ գերապատիւ Տ. Ներսէս նորապսակ եպիսկոպոս Մելիք-Թանգեանի անունով, որով եպիսկոպոսական պնակէ կրելու իրաւունք շնորհուեց: 29 սեպտեմբ., թ. 1386:

Կոնդակ Կեսարիայի Հայոց թեմի առաջնորդ գերապատիւ Տ. Խոսրով նորապսակ եպիսկոպոս Պեհրիկեանի անունով, որով եպիսկոպոսական պանակէ կրելու իրաւունք շնորհուեց: 29 սեպտեմբ., թ. 1387:

Կոնդակ նոյն Տ. Խոսրով եպիսկոպոսի անունով, որով բացարելով եպիսկոպոսական աստիճանի ծանրութիւնը՝ յորդուեց կատարել սրբութեամբ իւր վերայ դրուած բոլոր պարտականութիւնները հանդէպ եկեղեցւոյ, հայ աղզի և ս. էջմիածնի: 29 սեպտեմբ., թ. 1388:

Նոյնպիսի կոնդակ Տ. Ներսէս եպիսկոպոս Մելիք-Թանգեանի անունով՝ 29 սեպտեմբ., թ. 1389:

Կոնդակ ընդհանրական կեսարիայի Հայոց թեմի բոլոր հոգևորականութեան, հոգաբարձութեանց, գաւառական, կրօնական և քաղաքական ժողովների և ժողովրդի ամեն դասակարգի անունով, որով յայտնելով թեմի առաջնորդ Խոսրով ծ. վարդապետ Պեհրիկեանին եպիսկոպոսական տատիճանի բարձրացնելը՝ ազդիս Վեհափառ Հայրապետը յորդորում է աջակցութիւն ցոյց տալ եպիսկոպոսական առաջնորդին, որպէս զի կարողանայ իւր վրայ դրած ծանր պարտականութիւնները կատարել յօդուտ ազդի և եկեղեցւոյ 29 սեպտեմբ., թ. 1390:

Նոյնպիսի ընդհանրական կոնդակ Ատրպատականի թեմի հոգևորականութեան, հոգաբարձութեանց, թեմական ժողովի, խորհրդի և բոլոր ժողովրդի անունով՝ 29 սեպտեմբերի, թ. 1427:

Գրութիւն Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի անունով, որով ուղարկուեց Ղարսի փոխանորդ Տ. Երեմիա վարդապետի Ներկայացրած կազզուանի եկեղեցուց ստացուած եօթ թղթեայ ձեռագրերը՝ մատենադարանում անկորուստ պահելու համար: 30 սեպտեմբերի, թ. 1431:

Դիւանի գրութեամբ յայտնուեց Ղարսի փոխանորդ Տ. Երեմիա վարդապետին, որ ուղարկած եօթ թղթեայ ձեռագրերը յանձնուեց Մ. Աթոռի մատենադարան: 30 սեպտեմբ. թ. 1439:

Կոնդակ Շուշեցի ինժեներ Ներսէս Մինաս-Վարդապետանի անունով, որով օրհնութիւն և գոհունակութիւն յայտնուեց, որ իւր ծախքով շինել է Շուշու Մեղրեցոց ս. Աստուածին եկեղեցու զանգակատունը, և թոյլ տրուեց մահից յետոյ թաղել նորա մօր մարմինը նոյն եկեղեցու բակում: 1 հոկտեմբերի, թ. 1447:

Նորին Արքութիւնը Ատրպատականի Հայոց թեմի առ

ուաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի հոկտեմբերի 1-ի յայտարարութեան վրայ հետևեալն է մակագրել. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինօդին ըստ խնդրանաց Առողատականի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի, այս 1914—1915 ուսումն. տարուայ համար ևս տալ գլորցական նպաստ 350 սուրլիւ: 1 հոկտ., թ. 1492:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինօդին տեղեկանալ Օրգովի մաքսատնից, թէ ի՞նչու մինչև այժմ չի ստացուած է. Պօլսոյ ամենապատիւ Պատրիարքի ուղարկած եպիսկոպոսական պանակէն, խաչը և փիլտրը: 4 հոկտ., թ. 1501:

Կոնդակ ս. Էջմիածնի Սինօդի անունով, որով առաջադրուեց կուսակրօն հոգեորականների շարքն ընդունել կող գիւղացի Յովհաննէս այրի քահանայ Տէր Գրիգորեանին և այդ մասին տեղեկութիւն տալ Նորին Սրբութեան ի անօրէնութիւն: 4 հոկտ., թ. 1503:

Դիւանի գրութիւն Կալկաթայի և Զիջբայի հայոց եկեղեցու կառավարիչների անունով, որով յանձնարարուեց ուղարկել Կալկաթայում վախճանուած Գէորգ աղա Մանուկեանի կտակի վաւերական պատճէնը, որ ինչպէս երեսում է, զտնւում է եկեղեցու գործերի մէջ, և բացարել պաշտօնական Աւանդապահին (officiale trustee), որ ս. Էջմիածնի անունով նույիրաբերած քսան և հինգ հազար ռուսի գրամագլխի առկոսներն ինչպէս միշտ, այս անդամ ևս, ուղարկի Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի անունով: 8 հոկտ., թ. 1538:

Կոնդակ Երեանի հայոց փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով առաջադրուեց արեղայ ձեռնադրել Սևանի միաբան Արշակ Ծովիաննեանին: 8 հոկտեմբերի, թ. 1547:

Կոնդակ Նուխու վիճակի Մազրղու գիւղի եկեղեցական-ծիսական Հոգաբարձութեան անունով, որով օրէնելով հոգաբարձութեան և աեղական համայնքին, հաստատուեց Առարաց ծխական գլորցը: 9 հոկտ., թ. 1563:

Դիւանի գրութիւն Նոր-Նախիջևանի վոխանորդ Գէորգ վարդապետ Զէօրեկչեանի անունով, որով յանձնաբարուեց կարգադրել փոխադրել տալ Նորին Վեհափառութեան աշնունով Տփխիսի առևտրական բանկի Երևանի ճիւղի միջոցով հանգուցեալ Աարդիս Խռձեանի կտակագումարի առձեռն զրամը, իսկ արժէթղթերը Նորին Սրբութեան անունով ի պահ տալ Ռոստովի պետական բանկում և անդորրագիրն ուղարկել Վեհափառ Հայրապետին: 14 հոկտեմբերի, թ. 1641:

Կոնդակ ս. Էջմիածնի Սինօղի անունով, որով ուղարկելով Եկեղեցական և ազգային տօների մի ցուցակ, առաջադրուեց կարգադրել համաձայն այդ ցուցակի պարագմունքներից ազատել տալ պետական դպրոցներում սովորող հայ աշակերտ աշակերտունիներին: 15 հոկտ , թ. 1644:

Տօներ են՝

ա) Անուանակոչութիւն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի,

բ) Տեառնընդառաջ.

գ) Սրբոց Վարդանանց Զօրավարացն.

դ) Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ մուտն ի վիրապն.

ե)                  »                  »                  Ելն ի վիրապէն:

զ) Գիւտ նշանաբաց ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ.

է) Աւետումն ս. Աստուածածնի.

ը) Համբարձումն Քրիստոսի.

թ) Սրբոց թարգմանչացն մերոց Մեսրոբայ, Եղիշէի և այլոց.

ժ) Առաջին Լուսաւորչացն մերոց ս. Թադէոսի և Բարդուղիմէոսի Առաքելոցն:

ժա) Անուանակոչութիւն Նորին Սրբութեան ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի.

ժբ) Տարեգարձ Օծման Նորին Սրբութեան ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի.

Նորին Սրբութեան մակարութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինօղին ճանաչել Իգնատիոս քահանայ Տէր Մովսիսեանին Երևանի ս. Կաթուղիկէ Եկեղեցու ծխական

քահանայ՝ համաձայն նոյն եկեղեցու ծխականների բազմաստորագիր խնդրագրի և փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի միջնորդութեան: 18 հոկտ., թ. 1648:

Կոնդակ ս. Էջմիածնի Սինօդի անունով, որով յանձնարարուեց, համաձայն Երեանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի միջնորդութեան, Ապարանի Ավետ զիւղի Ներսէս քահանայ Տէր Յակովիքանին ընդունել Մողնուս. Գէորգ վանքի միաբան, որպէս զի վանահայր կարգուի նոյն վանքին: 18 հոկտ. թ. 1649:

Կոնդակ Երեանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց արեղայութեան վեղար տալ Տաթեի վիճակի Լոր զիւղացի այրի Յովհաննէս քահանայ Տէր Գրիգորեանին: 20 հոկտ. թ. 1653:

Դիւանի զրութեամբ յայտնուեց ճարտարապետ Կառավետ Խւզբաշեանին Նորին Սրբութեան գոհունակութիւնն ու օրհնութիւնը այն առթիւ, որ նա առանց վարձատրութեան, սիրայօժար կամքով, Շամախու առաջնորդ Տ. Կառավետ եպիսկոպոսի հետ միասին զնացել է Մէյսարի վանքը և մանրազնին քննութեան է ենթարկել վանահօր սենեակները և վանքի նորոգութեան կարօտ մասերը: 21 հոկտեմբերի, թ. 1655:

Նորին Սրբութիւնը Յեսսարաբիայի թեմի առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի հոկտեմբերի 23.ի հեռագրի վրայ (Պետրոգրադ հայ քահանայ ուղարկելու՝ հայ զինուորների հոգեուր ոլէտքերը հոգալու համար) հետեւալն է մակադրել. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինօդին պատուիրել Վրաստանի գերապատիւ առաջնորդին, որ ըստ խնդրանաց Պետրոգրադի Եկեղեցական խորհրդի, անմիջապէս ուղարկէ Պետրոգրադ Մանզիսի Արշակ քահանայ Արշակունուն, փոխարինաբար ճանապարհածախս տալով վիճակային արդիւնքից»: 24 հոկտ., թ. 1658:

Դիւանի զրութիւն Հին Նախիջևանի փոխանորդ Տ. Սիօն վարդապետի անունով, որով յանձնարարուեց չորհակալութիւն յայտնել Քէշիշքենդցի կոյր աշուղ Մէլքոնին՝

Տ. Երուանդ արեղայի միջոցով նուիրած մի գրչագիր աղօթագրի և մի կճղնաւոր անասունի քարացած ոտքի թաթի համար: 27 հոկտ., թ. 1666:

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի թանգարանի հսկող Տ. Թագէոս արեղայի անունով, որով յանձնուեց թանգարան պահելու Տ. Երուանդ արեղայի ներկայացրած կճղնաւոր անասունի քարացած թաթը: 27 հոկտ., թ. 1667:

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի անունով, որով ուղարկուեց մատենադարանում անկորուստ պահելու համար Տ. Երուանդ արեղայի ներկայացրած գրչագիր աղօթագիրքը: 27 հոկտեմբերի, թ. 1668:

Նորին Սրբութիւնը Երևանի փոխ-թեմակալի այս տարուայ մարտի 25-ի, թ. 716 յայտարարութեան վրայ հետեւեան է մակագրել. «Յարգելով Երևանի փոխ-թեմակալի միջնորդութիւնը և Ենիջա գիւղի ծխականների խընդիրը, այլ և ի նկատի ունենալով, որ Խաչատուր քահանայ Ենկոյեանը ստորագրութիւն է տուել ցմահ մնալ և քահանայագործել Ղարսի շրջանի Ենիջայ գիւղում, ուստի պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինօդին թոյլատրել քահանայագործել Ենկոյեան քահանային Ենիջա գիւղում և տեղեկութիւն տալ այդ մասին Երևանի կոնսիստորիային և նրա միջոցով Ղարսի Հայոց Հոգեոր Կառավարութեան: 27 հոկտ., թ. 1669:»

Կոնդակ Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն Եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց արեղայութեան վեղար տալ Ապարանի Ամինա գիւղի Ներսէս քահանայ Տէր Յակովեանին և կարգել Մողնու ս. Գէորգ վանքի միարան սահմանեալ կարգաւ: 30 հոկտեմբերի, թ. 1671:

Դիւանի գրութեամբ յայտնուեց Պարսկա-Հնդկաստանի Հայոց առաջնորդական խորհրդարանին, որ ինչպէս յայտնում է Կ. Պոլոյ Հայոց ամենապատիւ պատրիարքը, Ռուսա-Տաճկական պատերազմի առթիւ Տրապիզոնի առաջնորդ

Գէորգ ծ., վարդապետ Թուրեանին առայժմ անյարմար է հեռացնել թեմից և Պարսկա-Հնդկաստանի առաջնորդական փոխանորդ կարգել: 31 հոկտ., թ. 1682:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵԽԱԾՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կոնդակ Երեանի Վիճակային Կոնսիստորիայի անդամ Գարեգին քահանայ Թաշտորեանի անունով, որով, փոխ-թեմակալ Տ. Խորէն Եալիսկոպոսի միջնորդութեան համաձայն, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց: 13 սեպտեմբերի, թ. 1315:

Կոնդակ Նոր-Բայազիտի Սարգիս քահանայ Ազարեանի անունով, որով նոյն փոխ-թեմակալի միջնորդութեան համաձայն աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց: 13 սեպտեմբերի, թ. 1316:

Կոնդակ Գառնուայ գործակալ Ներսէս քահանայ Տէր Վարդանեանի անունով, որով նոյն փոխ-թեմակալի միջնորդութեան համաձայն, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց: 13 սեպտեմբերի, թ. 1317:

Կոնդակ Ղարսի Հայոց հոգեոր կառավարութեան անդամ Վաղինակ քահանայ Ջրոյեանի անունով, որով նոյն փոխ-թեմակալի միջնորդութեան համաձայն, թաւշեայ «կամիլաւկա» գլխարկ կրելու իրաւունք շնորհուեց: 13 սեպտեմբերի, թ. 1318:

Կոնդակ Մեղրիի շրջանի գործակալ Թաշտորի քահանայ Տէր Գրիգորեանի անունով, որով նոյն փոխ-թեմակալի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 13 սեպտեմբերի, թ. 1319:

Կոնդակ Թագագիւղի Համազասպ քահանայ Տէր Սարգսեանի անունով, որով նոյն փոխ-թեմակալի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 13 սեպտեմբերի, թ. 1320: